

**ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԴԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ժամանակակից աշխարհը կարելի է բնութագրել որպես եկամուտների տարբեր մակարդակ ունեցող երկրների համախմբություն: Ընդ որում, տատանման չափը հսկայական է՝ սկսած մեկ շնչին ընկնող համախառն եկամտի 200 ԱՄՆ դոլարից՝ Աֆրիկայի և Ասիայի որոշ երկրներում, մինչև՝ 30,000 ԱՄՆ դոլար՝ զարգացած երկրներում:

Սա, մի կողմից իհարկե, կարելի է բացատրել տարբեր երկրների միջև գոյություն ունեցող այնպիսի օբյեկտիվ առանձնահատկություններով, որոնք առկա են երկրների միջև, ինչպիսիք են աշխարհագրական դիրքը, բնակչության թիվը, տնտեսական ռեսուրսների առկայությունը, քաղաքական կայունությունը և այլն: Սակայն, մյուս կողմից, վերջին երկու-երեք հարյուրամյակների ընթացքում տնտեսական կապերը երկրների միջև այնքան արագ են զարգանում, որ նրանք փոխադարձաբար հնարավորություններ ունեն օգտվելու միմյանց առաջատար տեխնոլոգիաներից, աշխատուժի տեղաշարժը գրեթե չէր սահմանափակվում, և տրամաբանական կլիներ ենթադրել, որ եկամուտների մակարդակների տարբերությունը պետք է նվազեր: Այնուամենայնիվ, տեղի է ունենում հակառակը՝ տնտեսական ինտեգրացիային մեկտեղ զարգացած և զարգացող երկրների միջև եկամուտների տարբերությունը ոչ միայն չի նվազում, այլ, որոշ դեպքերում, մեծանում է:

Ահա այս հիմնախնդիրներն է ուսումնասիրում *զարգացման էկոնոմիկան* (Economics of Development), որը, այնուամենայնիվ, որոշ տնտեսագետների կողմից չի համարվում առանձին գիտություն և չի դասվում տնտեսագիտության այնպիսի ինքնուրույն գիտությունների շարքին, ինչպիսիք են, օրինակ, մակրոէկոնոմիկան, աշխատանքի էկոնոմիկան, պետական ֆինանսները և այլն:

Իհարկե, այդ կարծիքը կարելի է որոշ չափով կիսել, հաշվի առնելով այն հանգամանքը, որ զարգացման էկոնոմիկայում օգտագործվում են նույն տերմիններն ու գաղափարները, ինչ տնտեսագիտության այլ բաժիններում,

սակայն վերջին 40-50 տարիների պրակտիկան ձևավորեց տնտեսական զարգացումը ուսումնասիրելու ինքնուրույն մեթոդներ:

Նրանք տարբերվում են և՛ զարգացած երկրներում կիրառվող ուսումնասիրման նեոդասական մեթոդներից, և՛ մախկին սոցիալիստական երկրներում կիրառվող վարչա-հրամայական մեխանիզմներից: 1979 թ. նոբելյան մրցանակ է շնորհվել Ա. Լյուխին (Փրինստոնի համալսարան) և Տ. Շուլցին (Չիկագոյի համալսարան)՝ տնտեսական զարգացման հիմնահարցերի համակարգման և լուծումների փաթեթներ առաջարկելու համար: Այս փաստն ինքնին խոսում է հօգուտ զարգացման էկոնոմիկայի՝ որպես ինքնուրույն գիտության կայացմանը:

Ի տարբերություն *ավանդական տնտեսագիտության*, որն ուսումնասիրում է սահմանափակ ռեսուրսների ամենարդյունավետ կերպով բաշխման մեխանիզմները այն հասարակություններում, որտեղ աշխատում է զնային ինքնակարգավորման մեխանիզմը, և բոլոր որոշումները ընդունվում են՝ ելնելով սահմանային օգտակարության սկզբունքից, ինչպես նաև *քաղաքատնտեսության*, որն ուսումնասիրում է տնտեսական և քաղաքական էլիտաների տնտեսությունը կառավարելու լծակները և հակազդեցությունները, *զարգացման էկոնոմիկան* ուսումնասիրում է այն տնտեսական քաղաքականությունը, որը պետք է իրականացվի մակրո- և միկրոմակարդակներով՝ որ զարգացող երկրներում զգալի տնտեսական աճ ապահովելու համար: Բանն այն է, որ այդ երկրներում, այդ թվում նաև Չայաստանում, ապրանքների և ռեսուրսների շուկաների մեծ մասը աղավաղված են, այսինքն, արտադրողներն ու սպառողները չեն տիրապետում տեղեկատվության, հետևաբար, ստեղծված է իրավիճակ, որտեղ զները, առաջարկն ու պահանջարկը հավասարակշռված չեն:

Տնտեսական աճ և տնտեսական զարգացում: Այս երկու տերմինները միայն առաջին հայացքից են հոմանիշներ թվում, այնինչ դրանց միջև կա կոնցեպտուալ տարբերություն. տնտեսական աճը, լինելով ընդհանուր առմամբ դրական երևույթ, հաճախ ուղեկցվում է նաև որոշ բացասական միտումներով: Պատճառն այն է, որ տնտեսական աճը բնորոշվում է *քանակական* հարթության վրա, իսկ տնտեսական զարգացումը՝ *որակական* ցուցանիշ է:

Տնտեսական աճ: Գոյություն ունի տնտեսական աճը բնորոշող երկու բանաձև. ռեալ համախառն ներքին արդյունքի (ՂՆԱ) փոփոխությունը, որը շատ

երկրներում արտացոլում է իրական աճը: Սակայն որոշ երկրներում բնակչության աճը գերազանցում է ՀՆԱ-ի աճը: Այս դեպքում պետք է ուղղակի համեմատել բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի փոփոխությունը:

ՀՆԱ-ի աճի ապահովման անհրաժեշտությունը *կարճաժամկետ ժամանակահատվածում* բացատրվում է հիմնականում գործազրկության մակարդակը նվազեցնելու ցանկությամբ: Այսպես, պետությունը ակտիվ դրամավարկային և ֆիսկալ քաղաքականության միջոցով կարող է բարձրացնել ամբողջական պահանջարկի չափը, դրանով հասնելով պոտենցիալ ՀՆԱ մակարդակին և նվազեցնելով գործազրկությունը մինչև նրա բնական մակարդակը: Սակայն տնտեսական աճ չի համարվում կարճաժամկետ ժամանակահատվածում ՀՆԱ աճը մինչև նրա բնական մակարդակը: Առավել կարևոր խնդիր է՝ ապահովել հենց բնական մակարդակի կայուն աճը, որը, երկարաժամկետ կտրվածքով, հնարավոր է միայն ամբողջական առաջարկի պարամետրերի, ավելի կոնկրետ՝ աշխատուժի, կապիտալի և տեխնոլոգիաների փոփոխության շնորհիվ: Ընդ որում, եթե աշխատուժի աճը ուղիղ համեմատական լինի բնակչության աճին, ապա մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կնվազի: սա բացատրվում է նրանով, որ լրացուցիչ աշխատուժը նվազեցնում է մեկ աշխատողին ընկնող կապիտալի և հողի քանակը, դրանով իսկ նվազեցնելով աշխատուժի արդյունավետությունը:

Ներկա պայմաններում Հայաստանում տնտեսական աճի բարձր տեմպեր կարող են ապահովվել՝ հաշվի առնելով այն կանխագուշակումը, որ նոր աշխատատեղերի ստեղծումը, փաստացի գործազուրկների աշխատանքի տեղավորվելը կընթանա շատ ավելի արագ, քան բնակչության բնական աճն ու իմիգրացիան:

Ինչ վերաբերում է *կապիտալին*, ապա կապիտալի կուտակումը տեղի է ունենում, երբ ընթացիկ եկամտի մի մասը խնայվում է և ներդրվում՝ ապագա եկամուտների ավելացման նպատակով: Հիմնականում կապիտալ ասելով հասկանում ենք *ֆիզիկական կապիտալը*՝ գործարանները, սարքավորումները, նյութերը: Սակայն, երբ գյուղացին գնում է նոր տրակտոր և սպասում է առատ բերք, անհրաժեշտ են բարվոք ճանապարհներ: Այսպիսով, կարևորվում է նաև *ենթակառուցվածքային կապիտալը*՝ կապը, հաղորդակցությունը, տրանսպորտը: Հաճախ նաև *մարդկային կապիտալի* մեջ ներդրումների

արդյունավետությունը շատ ավելի կարևոր է, քան աշխատուժի քանակի ավելացումը:

Պետք է նաև տարբերակել երկու հասկացություն *կապիտալի լայնացում* և *կապիտալի խորացում*: Առաջինը տեղի է ունենում, երբ կապիտալի քանակը տնտեսության մեջ աճում է, սակայն՝ ավելի փոքր տեմպերով, քան աշխատուժի քանակի աճը: Այս դեպքում էլ, մվազող եկամտաբերության սկզբունքից ելնելով, տնտեսական աճը անհնարին է դառնում:

Կապիտալի խորացումը իրենից ներկայացնում է մի իրավիճակ, երբ կապիտալը աճում է ավելի արագ, քան աշխատուժը: Մեր պայմաններում սա գրեթե անհնարին խնդիր է: Մի կողմից, իհարկե, կապիտալը նորացման և ավելացման կարիք ունի, և համապատասխան ներքին և արտաքին ներդրումների շնորհիվ կարելի է հասնել նրա ավելացման բարձր տեմպերի, սակայն, մյուս կողմից, իրական գործազրկության մակարդակը Հայաստանում այնքան բարձր է, որ այստեղ մոտակա մի քանի տարվա ընթացքում հնարավոր է լավագույն դեպքում միայն կապիտալի լայնացման գործընթացը:

Տեխնոլոգիական առաջընթացը տնտեսական աճի ապահովման երրորդ, մեր դարաշրջանի համար ամենադիմամիկ և ազդեցիկ գործոնն է: Այն բնորոշվում է տվյալ քանակի ռեսուրսներից ավելի շատ արտադրանք ստանալով, կամ, ապահովելով տվյալ արտադրանքի քանակը՝ ավելի քիչ ռեսուրսներից: Վերջին տասնամյակների ընթացքում զարգացած երկրների կառավարությունները, ինչպես նաև խորհրդային Միությունը, հսկայական ներդրումներ են արել բարձր տեխնոլոգիաների մեջ: Ցավոք, զարգացող երկրները, իսկ սոցիալիստական ճամբարի փլուզումից հետո նաև նորանկախ պետությունները, հնարավորություն չունեն մեծ գումարներ տրամադրել ֆունդամենտալ և կիրառական գիտությունների ֆինանսավորման համար և հանդիսանում են հիմնականում տեխնոլոգիաների դոնոր (լավագույն դեպքում), կամ «ուղեղների արտահոսքի» աղբյուր: Մեր դեպքում կարելի է հուսալ տեխնոլոգիաների ներկրման և սեփականների զարգացման մասին՝ հիմնականում համատեղ ձեռնարկությունների, արտերկրից ներմուծված արտադրական հոսքերի ներդրման արդյունք որպես: Սոտակա 5-8 տարիների ընթացքում, պլանավորված աճի տեմպերով հանդերձ, մույնիսկ պետական ծախսերը know-how-ների խրախուսման և տեխնոլոգիաների համակարգված արտահանման վրա կլինեն խիստ անբավարար:

Կոպիտ դիտարկման ժամանակ կարող ենք տնտեսական աճի տեսությունների սկիզբ համարել Պետտիի, Սմիթի և Ռիկարդոյի աշխատությունները, երբ տնտեսական աճը նոր երևույթ էր արևմուտքի համար: Սակայն մենք շեշտը կդնենք 20-րդ դարի երկրորդ կեսին արված խորը ուսումնասիրությունների վրա, որոնք կրում են խիստ ձևավորված, գիտական բնույթ:

50-60-ան թթ. ընթացքում ձևավորված այսպես կոչված *գծային փուլերի տեսությունը*, որի հեղինակն էր ամերիկյան տնտեսագետ *Ուոլդ Ռոսթոուն*, տնտեսական զարգացման հիմքում էր տեսնում տնտեսական աճի մի քանի փուլեր, որոնցով յուրաքանչյուր զարգացող երկիր պետք է պարտադիր անցնի: Այդ փուլերն են՝

- *ավանդական հասարակություն*, երբ շեշտը դրված է գյուղատնտեսության և պրիմիտիվ տեխնոլոգիաների վրա,
- *թռիչքի նախադրյալների ստեղծում*, երբ աճում է գյուղատնտեսության արդյունավետությունը, և արտադրական սեկտորի զարգացման համար աշխատուժ է ազատվում,
- *թռիչք*, երբ խնայողությունների բարձր մակարդակը հնարավորություն է տալիս արտադրողականության կտրուկ աճի,
- *զանգվածային սպառում*, ապրանքային զանգվածի ավելցուկ, ծառայությունների սեկտորի կտրուկ աճ:

Այս տեսության հիմնական թերությունն այն է ինչի մասին մենք արդեն նշեցինք. ի տարբերություն զարգացած երկրների՝ թերի զարգացած երկրներում կառուցվածքային, ինստիտուցիոնալ, մշակութային նախադրյալները, ինչպիսիք են, օրինակ, ձեռնարկատերերի մտածելակերպը, զարգացած ապրանքային և դրամական շուկաները և այլն, կամ բացակայում են ընդհանրապես, կամ շատ են տարբերվում ինդուստրիալ երկրներից:

Կառուցվածքային վերափոխումների տեսությունը երկրորդն է իր նշանակությամբ տնտեսական զարգացման ժամանակակից տեսությունների շարքում: Այն հիմնականում բնորոշվում է նորեյան մրցանակի դափնեկիր Արթուր Լյուիսի երկճյուղային մոդելով, որը ենթադրում է աշխատուժի ավելցուկ գյուղատնտեսության մեջ (առաջին սեկտոր) և ինդուստրիալիզացիայի բարձր տեմպեր քաղաքներում (երկրորդ սեկտոր), ուր մեկ աշխատողի միջին եկամուտը մոտ 30 տոկոսով ավելի բարձր պետք է լինի գյուղի աշխատողների

եկամտից, այսպիսով կխթանվի ուրբանիզացիան: Մողելում կիրառվում են էկոնոմետրիկայի և տնտեսական վիճակագրության մեթոդները: Այս մոդելի թույլ կողմերից է այն ենթադրությունը, որ կապիտալիստները կներդնեն սեփական շահույթները նույնատիպ կապիտալի լայնացման մեջ, այնինչ հնարավոր է, որ շահույթները վերաներդրվեն խնայող տեխնոլոգիաների մեջ, իսկ վատագույն դեպքում՝ դեպոզիտացվեն արևմտյան բանկերում: Նորից ստանում ենք մի իրավիճակ, որ զարգացող երկրների առանձնահատկությունները թույլ չեն տալիս լիարժեք կերպով ընդունել Արևմուտքում «աշխատած» տնտեսական մոդելը:

Երրորդ ուղղությունը՝ *արտաքին կախվածության տեսությունը*, ծագեցել ենելով առաջին երկու տեսությունների ոչ պրակտիկ լինելու հետևանքով: Ըստ էության, այն մարքսիզմի տեսության արդյունք կարելի է համարել: Ըստ այդ տեսության ամենառադիկալ ուղղության, զարգացած երկրները թաքնված հատուկ քաղաքականություն են վարում, որպեսզի սահմանափակեն հնարավոր տնտեսական զարգացման միտումները զարգացող երկրներում: Դրան են նպաստում նաև հարուստների փոքրաթիվ խմբերը հենց այդ երկրներում, որոնք շահագրգռված են պահպանելու եկամուտների անարդար բաշխման ներկա համաչափությունները:

Ինչպես ասում են, նորը լավ մոռացված հիմն է: Այսպես, 80-ականների սկզբին զարգացած երկրներում իշխանության եկած պահպանողականները առաջ քաշեցին այսպես կոչված *նեոդասական հեղափոխության* «տեսությունը», ըստ որի պետության կողմից ցանկացած միջամտությունը միայն խոչընդոտում է զարգացմանը: Պետք է կատարվի լիակատար սեփականաշնորհում, առևտրային ռեժիմների ազատականացում: Նրանք գտնում են, որ, Երրորդ աշխարհի հիմնական դժվարությունների հիմքում ընկած է ոչ թե զարգացած երկրների թաքնված քաղաքականությունը, այլ հենց այդ երկրներում պետական միջամտության, չինովնիկների կաշառակերության և այդ կարգի այլ երևույթների պատճառով: Օրինակ, չնայած մոնոպոլիզացիան սովորական երևույթ է Երրորդ աշխարհում, դասական մոնոպոլիայի մոդելը կիրառելի չէ, որովհետև շահույթի մաքսիմալացումը միշտ չէ, որ հանդիսանում է հիմնական մոտիվացիա. առաջին պլան են հաճախ մղվում աշխատատեղերի ստեղծումը և/կամ արտասահմանյան մենեջերների փոխարինումը տեղական կադրերով: